**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ**

<<24>> ապրիլի 2014թ N 65

Ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵՅԻՑ>> ՀՈԴՎԱԾՈՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ << ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ>> ՀՈԴՎԱԾՈՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԻՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՀՆ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի մարտի 21-ի N290-Ն հրամանով սահմանված կարգով և հաշվի առնելով, որ 2014 թվականի հունվար-մարտ ամիսներին ձմեռվա ցրտաշունչ պայմաններում մարզպետարանի վարչական շենքի ջեռուցումը կազմակերպվել է բարձրացված ռեժիմով գազամատակարարամամբ և զգալիորեն գազի մատակարարման փաստացի ծախսերը գերազանցել են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախատեսված նորմերը, 2014 թվականի առաջին եռամսյակում գազի ծառայության գծով գոյացած պարտքերը մարելու նպատակով.*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

*1.Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծրագրի գծով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման << Այլ նպաստներ բյուջեից >> հոդվածով 2014 թվականի երրորդ եռամսյակում նախատեսված ծախսերից նվազեցնել 1.500,0 հազար դրամ և ավելացնել բյուջետային ծախսեր տնտեսագիտական դասակարգման <<Էներգետիկ ծառայություններ>> հոդվածով 2014 թվականի երրորդ եռամսյակում նախատեսված ծախսերին:*

*2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռազմիկ Հայրապետյանին սահմանված կարգով ծանուցագիր ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

Է.ՂԱԶԱՐՅԱՆ